10.56653/18290361-2025.15-35

Մեդա Գալստյան
*Հայաստանի պատմության թանգարան*
sedagalstyan@yahoo.com

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ*

**Հիմնաբառեր.** հեղափոխության բաժին, դեկրետ, Դավիթ Անանուն, մայր թանգարան, սովետական շրջան, նոր և նորագույն պատմություն

## Նախաբան

Մեր նպատակն է Հայաստանի պատմության թանգարանի (ՀՊԹ) 105-ամյա գործունեության ընթացքում ներկայացնել Մայր թանգարանի բաժիններից մեկի՝ Նոր և նորագույն պատմության բաժնի ստեղծման պատմությունը, դերը և տարբեր փուլերում նրա գործունեությունը: Ուսումնասիրության նորույթն այն է, որ առաջին անգամ թանգարանի ստեղծման պատմության մեջ մանրամասնորեն ներկայացվում է նոր և նորագույն պատմության բաժնի գործունեությունը խորհրդային և 3-րդ հանրապետության տարիներին: Մինչ օրս չի լուսաբանվել թանգարանի առանձին բաժինների մանրամասն ամբողջական գործունեությունը, հատկապես հեղափոխության բաժնի, որը տարբեր տարիներին ունեցել է տարբեր անվանումներ: Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ այս ուսումնասիրությունը կնպաստի թանգարանի պատմությունն էլ ավելի ամբողջացնելու և ուշադրություն սևեռելու մեր ժողովրդի գիտա-կրթամշակութային կյանքի կարևոր դրվագներին պատմության տարբեր ժամանակահատվածներում: Ուսումնասիրությունն իրականացվել է պատմագիտական մեթոդներին համապատասխան, կիրառվել են Հայաստանի պատմության թանգարանի արխիվային նյութերը, թանգարանի ֆոնդերում պահվող փաստաթղթերը, ցուցանմուշների պատմական արձանագրությունները, ինչպես նաև թեմային առնչվող գիտական և վերլուծական հրապարակումները: 1920 թ. դեկտեմբերին հիմնվեց լուսավորության ժողկոմիսարիատը, որի կարևոր խնդիրներից մեկը նոր տիպի թանգարանների ստեղծումն էր, որպես ժողովրդի բարոյա-մշակութային օջախներ: Մեծ աշխատանք տարվեց հավաքչական գործի կապակցությամբ՝ ձեռք բերելով, հավաքելով, փրկելով հայկական մշակութային ժառանգությանը վերաբերող, տարբեր թանգարանային արժեքներ ներկայացնող նյութեր տարբեր հանրապետություններից, քաղաքներից՝ պետական թանգարան: Հատկապես այդպիսի նյութեր հավաքվել էին Թիֆ-

* Ստացվել է 12.02.2025 թ., ուղարկվել է գրախոսության՝ 12.03.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 13.08.2025 թ.:

լիսի հայկական ազգագրական, Կովկասի թանգարաններում: Ե.Լալայանի, Դ.Զավրիյանի, Քալանթարի, Տեր-Ավետիսյանի ջանքերով այս նյութերը հասան Երևան: Շահազիզի ջանքերի շնորհիվ Նոր Նախիջևանի հայկական թանգարանից բերվեց թանգարանային նյութերի մեծ մասը: Այս առումով հետաքրքիր է Սմբատ Տեր-Ավետիսյանի նամակը (ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 28) Հայաստանի Հանրապետության լուսավորության նախարարին՝ Կովկասյան թանգարանում հայոց կառավարության կողմից վերահսկիչ ունենալու և մշակույթի արժեքների վրա հսկողություն սահմանելու խնդիրների մասին. 1919 թ. 13 մարտ:

1920-ական թթ. Հայաստան բերվեցին շատ թանգարանային արժեքներ տարբեր հայկական համայնքներից՝ Աստրախանից, Պետրոգրադից, Օդեսայից և այլն:

## Հեղափոխության բաժնի ստեղծումը

Այդ բոլոր արժեքները հավաքվեցին հանրապետության պետական թանգարանում, որն ուներ 4 բաժիններ՝ ազգագրության, պատմագրական, հնագիտական, կերպարվեստի: Ավելի ուշ բացվեց նաև 5-րդ բաժինը՝ հեղափոխության բաժինը: Բոլոր բաժիններն իրենց առջև ունեին հստակ աշխատանքային խնդիրներ, որոնք ամրագրված էին թանգարանի կանոնադրության մեջ: Հեղափոխության բաժինը պետք է գիտականորեն ուսումնասիրեր հեղափոխական շարժումները, պահպաներ շարժման փաստաթղթերը, զբաղվեր զանգվածների հեղափոխական դաստիարակությամբ: Հանձնարարվում էր, որպես առանձին հեղափոխության թանգարան, հանրապետության ներսում և նրա սահմաններից դուրս գտնվող բոլոր պատմական փաստաթղթերի հավաքագրման և կենտրոնացման պատասխանատվությունը: Այն կարող էր լինել և՛ գրավոր՝ (հեղափոխական բրոշյուրներ, գրքեր, ամսագրեր, թերթեր, հռչակագրեր և թռուցիկներ, ինչպես նաև չհրատարակված ձեռագրեր, նամակներ) և՛ զենքեր, հագուստ ու անձնական իրեր, խմբակային և այլ լուսանկարներ, որոնք որևէ առնչություն ունեն Հայաստանի հեղափոխական շարժման որոշակի ժամանակաշրջանի, կուսակցական շրջանակների և գործիչների հետ կամ կարող են ծառայել որպես թանգարանի աշխատանքների նյութ:

Քիչ մանրամասնենք հեղափոխության բաժնի ստեղծումը, գործունեությունը՝ ժողկոմխորհի նախագահ Ալ.Մյասնիկյանի հրամանագրով՝ 1921թ. հունիսի 8-ի դեկրետով (Խորհրդային Հայաստան, 10 հուլիս, 1921թ. №123) (Հայաստանի յեղափոխական Հնադարան հիմնելու մասին) հեղափոխության արխիվը դարձավ Հեղափոխության թանգարանի հիմքը, ստեղծված որպես առանձին հեղափոխության բաժին մայր թանգարանի ներսում, որի աշխատանքները ղեկավարում էր Դավիթ Անանունը: Աշոտ Հովհաննիսյանի երաշխավորությամբ (ՀԱԱ, ֆ. 1191, ց.16, գ.67, թ.125) Դ.Անանունը 1923թ. փետրվարին նշանակվում է Խորհրդային Հայաստանի հեղափոխության թանգարանի վարիչ (Հակոբյան, 2020, 140): Ճիշտ է, այս նշանակման դեմ որոշ բոլշևիկներ (Սուրեն Ե. (Ս. Երզնկյան), «Մարտակոչ», 1923, սեպտեմբերի 5, 2–3) բողոքում են, բայց այդ շրջանում նրանց կարծիքը հաշվի չի առնվում:

Բանն այն է, որ Ա. Մյասնիկյանը, ով նախկինում անդամակցել էր ՍԴԲՀԿ-ին,( Ա. Մյասնիկյանի այդ փուլի գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս Հակոբյան Վ., Ալեքսանդր Մյասնիկյանի հասարակական-քաղաքական գործունեության մինչբոլշևիկյան փուլը «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Ե., 2017, 96–107) 1921 թ. մայիսին, անցնելով ՀՍԽՀ կառավարության գլուխ, պատասխանատու պաշտոնների է նշանակում իր ընկերներին և իրեն վստահելի անձանց, որոնց մեծ մասին ճանաչում էր դեռևս ՍԴԲՀԿ անդամության շրջանից: Այսպիսով՝ Խորհրդային Հայաստանում իշխանությունը, ըստ էության, անցնում է սպեցիֆիկյան անցյալ ունեցող մի խումբ բոլշևիկների ձեռքը: Այդ հանգամանքը նպաստում է ՀՍԴԲԿ-ի առանց ցնցումների լուծարմանը, նրա անդամների՝ պետական ապարատում, ինչպես նաև գիտակրթական հաստատություններում զանազան պաշտոններ զբաղեցնելուն: Դ. Անանունի նշանակումը կատարվում է հենց այս համատեքստում՝ Ա. Հովհաննիսյանի երաշխավորությամբ:

Պաշտոնավարման տարիներին Դ. Անանունը քայլեր է ձեռնարկում հայոց պատմության տակավին չլուսաբանված սկզբնաղբյուրներ հայտնաբերելու, հավաքելու և հրատարակելու ուղղություններով (Հակոբյան 2020, 141): Այս ժամանակահատվածում Դ. Անանունը «Նորք» ամսագրի մի շարք համարներում հրապարակում է արժեքավոր սկզբնաղբյուրներ (տե՛ս Երկու վավերագիր, // «Նորք», 1923, գիրք 1, էջ 321–327, Հնչակյանների հարումը ռուսական հեղափոխությանը ու սոցալիզմին, // «Նորք», 1923, գիրք 2, էջ 274-315, Վարդան Գոլոշյանը և իր շրջանը, // «Նորք», 1924, գիրք 4, էջ 328–361, Ժանդարմական վարչության զեկուցումը հայերի հեղափոխական շարժումների մասին, // «Նորք», 1925, գիրք 5–6, էջ 425–452:

Օրինակ՝ 1923 թ. մարտի 12-ին Սահակ Տեր-Գաբրիելյանին գրված նամակում Դ. Անանունը խնդրում էր Ս. Պետերբուրգի նախկինում ժանդարմական վարչության արխիվից ՀՍԽՀ Հեղափոխության հնադարանին ուղարկել հայ անլեգալ թերթերի հավաքածուներ, թռուցիկներ, գործիչների լուսանկարներ, հայ հեղափոխական շարժումների մասին զանազան զեկուցագրեր: Նա նաև հորդորում էր ջանքեր գործադրել Սենատից ստանալու Դաշնակցության գործը (1912 թ. դատավարության նյութերը)՝ իր բոլոր իրեղեն ապացույցներով և տվյալներով: Բացի այդ՝ անձամբ իր համար խնդրում էր Գ. Պլեխանովի բոլոր գործերի մի կոմպլեկտ և այլ գրքեր (Ազնավուրյան, 1984, 175):

Նույն շրջանում սփյուռքի ռամկավար գործիչներից Հրաչ Երվանդին ուղղված նամակում Դ. Անանունը հորդորում էր հին ու նոր պարբերականներ հավաքել թանգարանի համար և տեղեկություններ հաղորդել 1897 թ. ձերբակալված արմենականների մասին: Նամակում նաև ասվում էր, որ Արտակը (թերևս Դարբինյան – Վ. Հ.) խոստացել է Ա. Արփիարյանի արխիվն ուղարկել: Նամակի վերջում Դ. Անանունը հավելում էր, որ նույն հարցով դիմել է նաև Փարիզում գտնվող Մարտիրոս Սարյանին (Ազնավուրյան, 1984, 176–177):

Դավիթ Անանունը մասնակցում է Աշոտ Հովհաննիսյանի նախաձեռնությամբ և առաջարկված կազմով 1925 թ. հունիսի 11-ին և 13-ին Լուսժողկոմատի շենքում

հրավիրված պատմաբանների խորհրդակցությանը, որի նպատակը հայոց պատմության ձեռնարկի ծրագիր կազմելն էր: Խորհրդակցության ընթացքում, որին մասնակցել են նաև Լեոն, Հ. Մանանդյանը, Թ. Ավդալբեգյանը, Ս. Լիսիցյանը և այլք, քննարկել են ձեռնարկը «Հայաստան»-ի թե՞ «Հայոց» պատմություն կոչելու, հայոց պատմության սկզբի և պարբերականացման հարցերը (Հովհաննիսյան, 1990, 127–132): Ցավոք, սկզբնաղբյուրների բացակայության պատճառով հնարավոր չէ հետևել սույն հանձնաժողովի հետագա աշխատանքներին:

Հայաստանի Հեղափոխական թանգարանի տնօրենի պաշտոնում աշխատելու տարիներին Դ. Անանունը հանդես է գալիս նաև խորհրդահայ առաջին տասնամյակների իրականության համար խորթ մի նախաձեռնությամբ. թանգարանին կից ստեղծում է մի հանձնաժողով, որի նպատակը Հայկական հարցի ուսումնասիրությունը և խնդրո առարկայի վերաբերյալ «Հայկական հարց» շարքով անտիպ ու տպագրված վավերագրերի հրատարակությունն էր: Հանձնաժողովի աշխատանքների շնորհիվ հրատարակված առաջին ժողովածուի առաջաբանում (1926 թ. փետրվարի 9) Աշոտ Հովհաննիսյանը, կարևորելով անցյալի հեղափոխական մարքսիստական ուսումնասիրությունը, իրենց թշնամի և ընթացակից տարրերի վարքագծի գնահատումը, մատնանշում է պատմական երևույթներն իրենց պատմական, հասարակական էությամբ վերլուծելու, լուսաբանելու այժմեականությունը (Հովհաննիսյան, 1926, 11–13) տվյալ ժողովածուն ներառում էր ԽՍՀՄ արտաքին գործերի կոմիսարիատի կողմից Մոսկվայում 1924 թ. հրատարակված «Раздел Азиатской Турций: по секретным документам б. Министерства иностранных дел, под ред. Е. А. Адамова» ժողովածուի Հայաստանին վերաբերող փաստաթղթերը, որոնց թարգմանիչը Թ. Ավդալբեկյանն էր: Առաջաբանում Աշ. Հովհաննիսյանը լռում է ժողովածուի կազմման և ծանոթագրման մասին, բայց կարելի է ենթադրել, որ դա Դ. Անանունի ձեռքի գործն էր (Վ. Հակոբյանը իր «Դավիթ Անանունի նամակագրությունից» հոդվածի մեջ ներկայացնում է և լուսաբանում սոցիալ դեմոկրատ, պատմաբան, հրապարակախոս Դ. Անանունի և պատմաբան, Խորհրդային Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղար Ա. Հովհաննիսյանի հարաբերությունները «Պատմություն և մշակույթ», 2021 թ, նո. 1):

Նա նաև գոհունակություն է արտահայտում վերոհիշյալ հանձնաժողովի կազմած ծրագրի կապակցությամբ, որն ընդգրկում էր միջնադարից մինչև Լոզանի կոնֆերանսն ընկած ժամանակահատվածը (Հակոբյան 2020, 144): Պատմագիտական տեսանկյունից հետաքրքիր են նաև ծրագրի տասը մասերի վերնագրերը 1. Հայկական հարցի նախապատմություն, 2. Հայկական հարցը 18-րդ դարում, 3. Հայկական հարցը Բեռլինի պայմանագրից հետո, 4. Հայկական ջարդերը (1894 թ.), 5. Եվրոպական պետությունների շահերի բախումները Տաճկաստանում և Տաճկաստանի հեղափոխությունը (1908 թ.), 6. Բալկանյան պատերազմը և Հայաստանի «բարենորոգումների» հարցը, 7. Համաշխարհային պատերազմը և հայերը, 8. Ռուսական մեծ հեղափոխությունը և Հայկական հարցի լուծումը, 9. Հայկական հարցը Եվրոպայում Հայաստանի խորհրդայնացումից հետո, 10. Ազգային և «Ար-

նելյան» հարցը Մարքսի, Էնգելսի և Լենինի գործերում («Հայաստանի ավտոնոմիան» յեվ Անտանտան…, 16–17):

Սովետական Հայաստանի 5-ամյա տարեդարձի առթիվ, 1925 թ. նոյեմբերից կազմակերպված ընդարձակ ցուցադրությունից մեկ տարի հետո թանգարանն ունեցել է իր ինքնուրույն բյուջեն՝ մնալով լուսժողկոմատին ենթակա առանձին հաստատություն ըստ տնօրենի (Հասրաթյան 1972, 33):

Հեղափոխության պատմության բաժինը թանգարանի 5-րդ բաժինն էր մինչ 1928 թ.: Ձեռք բերելով նորանոր փաստաթղթեր, հեղափոխականներին նվիրված առատ նյութ՝ իրեր, լուսանկարներ, անձնական գործեր, համագումարների որոշումներ՝ Հայկ. ԽՍՀ Լուսժողկոմի որոշմամբ 1928 թ. մարտի 22-ին հեղափոխության բաժինն առանձնացվել է Պետական թանգարանից և հանդիսացել առանձին թանգարան՝ իր կանոնադրությամբ: Արխիվային փաստերը վկայում են այդ շրջանում հեղափոխության բաժնի համալրվելը թանգարանային արժեք ներկայացնող նյութերով (ՀԱԱ ֆ. 511, ց. 3, գ. 446, թ. 22): 1932 թ. առանց որևէ բացատրության Հայաստանի հեղափոխության թանգարանը փակվում է: Ամենայն հավանականությամբ փակման պատճառն այն էր, որ Ստալինի անձի պաշտամունքի ձևավորման շրջանում փակման վտանգի առջև հայտնվեցին առաջին հերթին այն թանգարանները, որտեղ թանգարանային իրերը քիչ էին լուսաբանում Ստալինի կյանքի անցած «հերոսական ուղին», իսկ քանի որ հեղափոխության թանգարանում հավաքված նյութերի մեջ քիչ էին այդ տիպի նյութերը, արգելեցին նրա հետագա գործունեությունը: Կարևոր ընթացք է ստացել թանգարանային գործը հատկապես թանգարանային աշխատողների համար Մոսկվայում կայացած համամիութենական համագումարից հետո, որտեղ ԽՍՀՄ կառավարության անունից ելույթ է ունեցել Ա. Բուբնովը (Սիմոնյան 1991, 20): Համագումարից հետո նկատվել է աշխուժացում բոլոր թանգարաններում: Այդ ընթացքում Հայաստանի պետական թանգարանը վերափոխվեց կուլտուր-պատմական թանգարանի: Մեծ ուշադրություն պետք է հատկացվեր թանգարանային արժեքների և հուշարձանների պահպանությանը: Եվ այդ բոլոր արժեքները հանդիսանում են սկզբնաղբյուրներ հայ ժողովրդի բազմադարյան քաղաքական, տնտեսական, մշակութային պատմության մեջ: 1920–1935 թթ. թույլ էր կազմակերպված ցուցադրական աշխատանքները: Սակայն դա բացատրվում էր նրանով, որ որևէ թանգարան չուներ համապատասխան ցուցադրության տարածք. պետական թանգարանը տեղադրված էր 2 սենյակներում, որոնք գտնվում էին այժմյան հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում: Եվ ցուցադրության տարածքն այնքան փոքր էր, որ անհնար էր միաժամանակ ցուցադրել հավաքածուների թեկուզ և լավագույն ցուցանմուշները: Միայն 1931 թ. բացվեց մայր թանգարանի առաջին ընդհանուր էքսպոզիցիան: Կարևոր հանգամանք էր նաև գիտական աշխատողների պակասը՝ ընդամենը 8 գիտաշխատող: Այն դեպքում, որ 1930-ական թթ. պետական թանգարանի հավաքածուն մոտ 20 000 միավոր էր, հասկանալի է, թե ինչքան աշխատանք էր կուտակվում նրանց ուսերին պահոցների կարգավորման, նյութերի մշակման և այլ հարցերում: Հաճախ նաև մեծ դեր ուներ թանգարանային գույքի բացակայությունը՝ ցուցափեղկեր, պահարաններ, մանեկեններ: Այս ամենը նաև արդյունք էր սուղ ֆինանսավորման:

## Հեղափոխության բաժնի հետագա փուլերը

Հանրապետության ղեկավարությունը, հաշվի առնելով թանգարանի բաժինների մեծածավալ աշխատանքը, 1935 թ. ապրիլի 28-ին ընդունեց որոշում՝ առանձին բաժինները դարձնել առանձին թանգարաններ: Այդ բաժինների հիմքի վրա ստեղծվեցին՝ Հայաստանի Գեղարվեստի պատկերասրահը, թատերական արվեստի և գրականության թանգարանը, իսկ հիմնական մասը մնաց որպես պատմության թանգարան1935-ից «Հայաստանի պետական պատմական թանգարան» (ՀՊԹ, ֆ.1, ց.3, գ.5, թ.1): Այս փուլով սկսվում է թանգարանային գործի նոր էտապ: Մեր ձեռքի տակ են ՀՊԹ-ի արխիվային նյութերը, որոնք փաստում են թանգարանային գործունեության տարբեր փուլեր: Հենվելով արխիվային նյութերի վրա՝ ներկայացնենք հեղափոխության բաժինը, որը տարբեր ժամանակներում տարբեր անուններ է կրել՝ Հայրենական պատերազմի բաժին, Նոր և Սովետական բաժին, Նոր և նորագույն պատմության բաժին և այլն: Դեռևս 1940 թ., երբ թանգարանը գործում էր որպես ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի պետ. պատմական թանգարան, Վասպուր Մելիքսեթյանին նշանակել են գիտական աշխատակից՝ (հետագայում՝ բաժնի վարիչ) «Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու 20-ամյակին նվիրված» հոբելյանական ցուցահանդեսի գծով (Պետ. պատմական թանգարան, ֆ.1, ց.3, գ.7, թ.9): Հոբելյանական ցուցահանդեսը գործել է մինչև 1941 թ. հունիս: Պետ. պատմական թանգարանի Հայրենական պատերազմի բաժնի գծով 1944 թ. կազմակերպվել է երկու ցուցահանդես՝ մեկը «Հայ ժողովուրդը հայրենական պատերազմի մարտական մասնակիցն է», մյուսը՝ 1944 թ. նոյեմբերի 19-ին՝ Թամանյան 89-րդ հայկական դիվիզիայի կողմից ձեռք բերված ռազմավարի ցուցահանդեսը, որը բացվել է քաղաքային թանգարանի շենքում: Բաժինը 1944 թ. Ռևոլյուցիայի թանգարանից ստացել է 19–20-րդ դարերի Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժումներին և հայրենական պատերազմին վերաբերող սևանկարների (նեգատիվների) ֆոնդը: Այս ֆոնդը մշակված չէր, ըստ բաժնի վարիչ Ս. Դիլանյանի, 1944 թ. վերջին երեք ամիսների ընթացքում ֆոնդը հիմնականում մշակվել (անձնագրավորվել է 2000-ից ավելի նեգատիվներ) և գրանցվել է մատյաններում: Հայաստանի պետական պատմական թանգարանի 1945 թ. գործունեության ընթացքում Հայրենական պատերազմի բաժինը բարելավել է ֆիլիալների (մասնաճյուղերի) ցուցադրությունները: Հիմնական նորոգման է ենթարկվել Շահումյանի տուն թանգարանը Ստեփանավանում: Հայրենական պատերազմի ֆիլիալը նույնպես թարմացել է նոր նյութերով և այդ տարվա երկրորդ կեսին ենթարկվելու էր վերակառուցման: Թանգարանը Հայրենական պատերազմի բաժնի ակտիվ մասնակցությամբ պատրաստվում էր կազմակերպել Հայաստանում սովետական կարգեր հաստատելու 25-ամյակին նվիրված «Ռեսպուբլիկական հոբելյանական ցուցահանդես» (ՀՊՊԹ հաշվետվություն, ֆ.1, ց.1, գ.224, թ.2): Ակադեմիկոս Լ. Օրբելին թանգարանի տպավորությունների գրքում, 1945 թ. նոյեմբերի 23-ին գրել է. «Սովետական Հայաստանի նվաճումների ցուցահանդեսի դիտումը ինձ վրա գործեց ցնցող տպավորություն: Իրավամբ այդ նվաճումները ապշեցուցիչ են բոլոր բնագավառներում՝ գյուղատնտեսություն, արդյունաբերություն, գիտություն: Բերկ-

րանքի զգացումով անցա Հայրենական պատերազմի բաժինը, որտեղ ցուցահանդեսը կազմակերպողները հավաքել են Սովետական միության հերոսների դիմանկարները և սիրով ցուցադրել են նրանց կյանքին և սխրագործություններին վերաբերող փաստաթղթեր»: Մինչև տարվա վերջ ցուցահանդեսը դիտել են մոտ 18.000 այցելուներ (ՀՊՊԹ հաշվետվություն, ֆ.1, ց.1, գ.224, 3):

Ամերիկահայ Պատրիկ Սելյանը (Ազգային խորհրդի փոխնախագահ) տպավորությունների մատյանում գրել է հետևյալը. «…Այս թանգարանը նոր շենքով օժտելու պարագային անպայման կդառնա վերածնված մեր երկրի փառքերեն մեկը…» (ՀՊՊԹ հաշվետվություն, ֆ.1, ց.1, գ.224, թ.2) Կարծում եմ՝ այս միտքը արդիական է նաև այսօր:

Հետաքրքիր է, որ արդեն 1948 թ. բաժնի 2 աշխատակիցներ պաշտպանել են իրենց թեկնածուական ատենախոսությունները, բավականին հաջող էր ընթանում հրատարակչական գործունեությունը, տարվա առաջին կիսամյակում վերադաս մարմինների որոշմամբ թանգարանի կազմից դուրս է եկել, կազմվել Հայրենական պատերազմի առանձին թանգարանը, որը կազմակերպվել է Հայաստանի պետական պատմական թանգարանի միջոցներով՝ 1943 թ. ընթացքում հայկական զորամասերի ձեռք բերած ռազմական ավարի հիման վրա (ՀՍՍՌ ԳԱ պետ. պատմական թանգարան, ֆ.1, ց.1, գ.238):

## Նոր և սովետական շրջանի պատմության բաժինը

Արդեն իսկ 1946 թ. ստեղծվել է Նոր և սովետական շրջանի պատմության բաժինը, որը կազմակերպում էր մշտական և հոբելյանական խոշոր ցուցահանդեսներ, ուսումնասիրում էր Հայաստանի պատմության նորագույն շրջանը և հավաքում թանգարանային էքսպոնատներ: «Ցուցասրահ չլինելու պատճառով նորագույն պատմության բաժինը չուներ ցուցադրում, որի հետևանքով այդ բաժնի վերաբերյալ բոլոր էքսպոնատներն ու նյութերը գտնվել են պահեստներում, մասամբ անմշակ վիճակում» (ՀՊՊԹ հաշվետվություն, ֆ.1, ց.1, գ.316, թ.1): Բաժինն ակտիվ մասնակցել է 1946 թ. հայրենադարձության կազմակերպման աշխատանքներին, նաև 1946 թ. Գետառի վարարման հետևանքով ջրհեղեղից տուժածներին օգնություն ցուցաբերելու աշխատանքներին:

Բաժնի համար կարևոր էր հայ ժողովրդի 18 և 19-րդ դարերի ցուցադրության նախապատրաստումը, նյութերի հավաքչական աշխատանքը: Ցուցադրությունը չի կազմակերպվել թանգարանի շենքի վերաշինման պատճառով:

Իսկ արդեն 1950 թ. Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 30-ամյակի կապակցությամբ կազմակերպվել է Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության կուլտուրան և բոլոր նվաճումներն արտացոլող հոբելյանական մեծ ցուցահանդես (Հաշվետվություն, 1950, ֆ.1, ց.1, գ.320, թ.8), որի կազմակերպման համար կառավարությունը դուրս էր գրել 150 հազար ռուբլի: Բաժինը հավուր պատշաճի կազմակերպել է նաև Ստալինի ծննդյան 70-ամյակին նվիրված հոբելյանական ցուցահանդես:

Նոր և սովետական շրջանի բաժինը, որն այդ ժամանակ ղեկավարում էր Վ. Մելիքսեթյանը, հիմնականում զբաղված էր Հայ ժողովրդի պատմությանը վերա-

բերող 18-րդ, 19-րդ, 20-րդ դարերի մշտական ցուցադրության կազմակերպման աշխատանքներով: Սակայն շենքի վերնահարկի (3-րդ հարկի) շինարարության պատճառով չէին կարող իրականացնել: Հիմնականում բաժինը զբաղվում էր գիտահետազոտական աշխատանքներով: 1957 թ. բաժնի գործունեության մեջ եղել են փոփոխություններ՝ բաժնի վարիչ Վ. Մելքսեթյանին փոխարինել է Վ. Քալաշյանը, Վ. Մելիքսեթյանը նշանակվել է գիտ. քարտուղար: Բաժնի և թանգարանի կարևոր ներդրումն էր նոյեմբերի 6-ին բացված ժող. տնտեսության նվաճումներին նվիրված ցուցահանդեսը, որին 1 ամսվա կտրվածքով մասնակցել է 80000 մարդ:

## Նոր և նորագույն պատմության բաժնի գործունեությունը

1957 թվականին արդեն արխիվային փաստաթղթերում հանդիպում է բաժնի նոր անվանումը՝ Նոր և նորագույն պատմության բաժին (ՀՊԹ արխիվ, ֆ.1, ց.1, գ.340): Նրա գործունեությունը 1957–1960 թթ. ուղղված էր Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության 40-ամյա հոբելյանին, ինչպես նաև 1958 թ. Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման 130-ամյակին նվիրված ցուցադրությունների աշխատանքներին, որը հատուկ էր առանձնանում բաժնի աշխատանքներում:

1965 թ. (Հայաստանի պատմության պետ. թանգարան, ֆ.1, ց.2, գ.129) թանգարանի գործունեության նոր և նորագույն պատմության բաժնի աշխատանքներում հատկապես կարևորվեց շրջիկ ցուցահանդեսների դերը, որով մեկնում էին Հայաստանի տարբեր շրջաններ, կազմակերպում ցուցադրություններ: Զմոռանանք, որ այդ տարի լրանում էր Հայոց Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցը, թանգարանը և հատկապես բաժինը պատրաստեց թեմատիկ ցուցահանդես՝ նվիրված Վանի, Շապին Գարահիսարի, Մուսա լեռան, Ուրֆայի հերոսամարտերին, ցուցադրեցին հայ ազգային հերոսներից՝ Անդրանիկի, Յաղուբյանի, Երկանյանի անձնական իրերը, զենքերը: Բաժնի աշխատակիցներ՝ Ս. Ամիրյանի և Ջ. Հովհաննիսյանի ջանքերով օտար լեզվով կազմվեց «Թանգարանի ուղեցույց»-ը: Թանգարանը գործում էր ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության Հայաստանի պատմության պետական թանգարան անվամբ: Թանգարանում գործել է պատանի հնասերների խմբակը: Անցկացվել են դասախոսություններ տարբեր վայրերում, ինչպես նաև քրեակատարողական հիմարկում, եղել են փաստագրական կինոնկարների ցուցադրումներ և այլն: 1966–67 թթ. բաժնի գործունեության մեծ մասը նվիրվում է իրադարձություն համարվող Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության 50-ամյա հոբելյանական տարեդարձին պատրաստվելուն, երկլեզու ուղեցույցի հրատարակմանը: Հետագայում աշխատանքներն ընթացել են մի քանի ուղղություններով: Մշտական էքսպոզիցիայի մասնակի փոփոխություններ, սփյուռքահայությունից ստացած նվերների ժամանակավոր ցուցադրություն, Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում ցուցահանդես 1968-ին (116 իր), պատրաստվել են Փարիզում կազմակերպվելիք նյութական մշակույթի ցուցահանդեսի նախապատրաստմանը:

1975 թ., 16 տարվա ընդմիջումից հետո լույս է տեսել «Թանգարանի աշխատությունների» 6-րդ հատորը: Բաժինը ձեռք է բերել մեծ քանակությամբ նյութեր՝

նվիրված հայկական գաղթօջախների պատմությանը: Հիշատակության արժանի է Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակների 30-ամյակին նվիրված միջոցառումը և «Մալայա զեմլյա»-ի պաշտպանների հետ հանդիպումը: Մեծ շուքով նշվել է 1978 թ. Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման 150-ամյակին նվիրված միջոցառումը: Կազմակերպվել է շրջիկ ցուցահանդես «Ռոսիա» կինոթատրոնում և այլն: Իրադարձություն էր համարվում նոր Սահմանադրության ընդունումը, որին էլ նվիրված էին մի շարք դասախոսություններ: Արդեն Հոկտեմբերյան հեղափոխության 60-րդ տարեդարձին բացվել է մշտական ցուցադրության հայ ժողովրդի պատմության 16–19-րդ դարերին նվիրված սրահները: Պատվիրվել են մի շարք գեղանկարներ, որոնք այսօր էլ կարևորվում են մեր մշտական ցուցադրությունում՝ Ս. Մուրադյանի «Սարդարապատի հերոսամարտը» եռանկարը, Գ. Ղուկասյանի «Ազատագրված Հայաստան», Գ. Ազիզյանի «Իսրայել Օրին և Մինաս Վարդապետը Պյոտր 1-ինի մոտ» և այլն: Վերանորոգվել են մի շարք դիորամաներ՝ «Երևանի բերդի գրավումը», «Ալավերդու պղնձաձուլական գործարանը» և այլն: Այս ձեռքբերումները կարևոր էին նոր շրջանի սրահների մշտական ցուցադրության և այցելուների կրթամշակութային դաստիարակության համար:

Մ. Գորբաչովյան 1985 թ. «վերակառուցմանը» հաջորդած ժամանակահատվածը թանգարանին անմասն չթողեց: Խնդիրն այն է, որ դեռևս 1960 թ. ԳԱ նախագահ Վ. Համբարձումյանը միջնորդել էր Հանրապետության կառավարության առջև՝ Հայաստանի պատմության թանգարանը հեղափոխության պատմության թանգարանին միացնելու խնդրանքով՝ պատճառաբանելով, որ այդ կերպ կխուսափեն խորհրդային հասարակության պատմության ցուցադրման կրկնությունից: Ինչպես և սպասվում էր՝ կառավարությունը մերժել է միջնորդությունը:

Մեր օրերում, երբ վերանայվում, վերագնահատվում են շատ արժեքներ ու երևույթներ, վերանայվել է նաև 1960 թ. փակված այս հարցը և նպատակահարմար գտնվել Հեղափոխության թանգարանը միավորել մայր թանգարանի հետ, որն իրագործվել է 1991 թ. մարտին (Հրամանագիրք, 1991, հր. 12, 37):

Թանգարանի պատմության մեջ նորույթ էր Նոր և նորագույն պատմության բաժնի (բաժնի վարիչ՝ Ս. Գալստյան) ջանքերով կազմակերպված նորանկախ հանրապետության 5-րդ տարեդարձին նվիրված (1996) «Հայաստանի հանրապետություններ» խորագիրը կրող ցուցահանդեսը: Առաջին անգամ փաստացի ներկայացվեց մեր ժողովրդի պատմության 80 տարիների իրադարձությունները: Առաջին անգամ ներկայացվեց գիտական նոր մեկնակետ՝ Հայաստանի 1-ին հանրապետության (1918–1920), Խորհրդային Հայաստանի (1920-1991), Հայաստանի երրորդ հանրապետության (1991–մինչև մեր օրերը) ցուցադրություններում: Ցուցահանդեսն օգնեց հարստացնել թանգարանի ֆոնդերը Առաջին հանրապետությանը նվիրված նյութերով: Նշեմ, որ 1990-ականների վերջերին բաժնին միացել էր նաև սփյուռքի բաժինը, որը կարճ պահպանեց իր գոյությունը (բաժնի վարիչ՝ Ա. Սիմոնյան): Բաժնի աշխատակիցները հավաքչական աշխատանքներ իրականացնելու նպատակով կապեր հաստատեցին 1-ին հանրապետության պետական այրերի հարազատների հետ թե՛ արտերկրում, թե՛ Հայաստանում: Բաժինն ակտիվ մասնակցել է անկախության 10, 15, 20, 25, 30-ամյա տարեդարձներին բազմաթիվ ցուցահան-

դեսներով՝ օգտագործելով նաև թանգարանի կամարաշար հատվածը: Կարևորելով թանգարանային արժեք ներկայացնող նոր նյութերի ձեռքբերումը՝ տարբեր տարիներին նշվել է մեր զորահրամանատարների՝ Զորավար Անդրանիկ-120, 150, 160, մարշալներ Հովհ. Բաղրամյան-100, Հովհ. Իսակով-110, գեներալ Արկադի Տեր-Թադևոսյան (Կոմանդոս)-85, Վազգեն Սարգսյան-65 և այլն, հասարակական-պետական քաղաքական գործիչների կյանքին ու գործունեությանը նվիրված իրադարձությունները: Բաժնի գիտաշխատողները մասնակցել են տարբեր դասախոսությունների, այդ թվում զորամասերում, մասնակցել կրթական ծրագրերին: Հայոց Մեծ եղեռնի 100-ամյակին ընդառաջ կատարվեցին փոփոխություններ մշտական ցուցադրության մեջ, տպագրվեց Ա-Դոյի ձեռագիր աշխատությունը՝ «Հայության երկունքը»: Տպագրության պատրաստվեց «Տարագիր գերդաստաններ» պատկերագիրքը: Կառավարական միջոցառումների շարքում մեծ շուքով նշվեց Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակին նվիրված ցուցադրությունը: Տպագրվեցին մի շարք աշխատություններ՝ «Սահակ Թորոսյան. Հայաստանի առաջին հանրապետության Երևանի նահանգապետը» (Ս. Գալստյան), 2007, «Հայոց պետականության վերածնունդի 100 էջերը», 2018 (Ս. Գալստյան) և այլն:

Հայաստանի պատմության թանգարանի (ՀՊԹ) նոր և նորագույն պատմության բաժնի ֆոնդերը ՀՀ անկախության 33 տարիներին հարստացել են թանգարանային արժեք ներկայացնող շատ հավաքածուներով, քաղաքական, հասարակական, մշակութային գործիչների արխիվներով, Հայրենական մեծ պատերազմի, խորհրդային շրջանի, Արցախյան 1-ին և 2-րդ պատերազմների զինվորների, հրամանատարների, հերոսների մասին պատմող նյութերով, ալբոմներով, տեսաժապավեններով: Քանի որ խորհրդային շրջանում հասկանալի պատճառներով չէր ներկայացվել Հայաստանի առաջին հանրապետության շրջանը, կարևորվում էր համապատասխան նյութերի ձեռքբերումը՝ 1918–1920 թթ. Անկախ Հայաստանի պատմությունը հավուր պատշաճի ներկայացնելու վերաբերյալ: 1996 թ. թանգարանը Հայաստանի առաջին հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունու դստեր՝ Մարգո Քաջազնունու և թոռնուհու՝ Լիլյա Քաջազնունու միջոցով ձեռք բերեց վարչապետի՝ թանգարանային արժեք ներկայացնող արխիվը (ՀՊԹ, նգպֆ, նո. 17543/1-191): Այն հարուստ նյութ է պարունակում Հայաստանի առաջին հանրապետության քաղաքական պատմության, տնտեսության, կարևոր դեմքերի՝ հանձինս առաջին վարչապետի, իրադարձությունների մասին: ՀՊԹ-ն առաջին անգամ՝ 1996 թ. ձեռք բերեց հայ պետական, ռազմական գործիչ Գ. Նժդեհի արխիվը՝ իր եղբայր Լևոնի թոռ Վազգեն Տեր-Հարությունյանի միջոցով. մեր հերոսի Վլադիմիրի բանտում թողած վերջին մասունքները[1]: Արժեքավոր արխիվների կողքին կարևորում ենք ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար (1966–1974) Անտոն Քոչինյանի անձնական արխիվի (ՀՊԹ, նգպֆ, մմ 18816, բ/մ 3402-3764) ձեռք բերումը և ուսումնասիրությունը (2005 թ.): Մինիստրների սովետի նախագահ, ՀՀ ԳԱ նախագահ Ֆ. Սարգսյանի արխիվի ձեռք բերումը, որը թանգարանին նվիրեց ակադեմիկոսի դուստրը՝ Թամարա Սարգսյանը: (853 միավոր նյութ):

---

[1] Վազգեն Տեր-Հարությունյանը այդ հավաքածուն ի պահ է տվել ՀՊԹ-ին:

2022թ. Հայաստանի պատմության թանգարանը հյուրընկալեց Նոբելյան մրցանակի առաջին հայազգի դափնեկիր, բժշկագիտության ոլորտի անվանի ներկայացուցիչ, մոլեկուլային կենսաբան, նյարդաբան Արտեմ Փաթափությանին, ով իր մրցանակը նվիրաբերեց Հայաստանի պատմության թանգարանին: Նույն ժամանակահատվածում թանգարանը ստացավ մեկ այլ բացառիկ ցուցանմուշ՝ տիեզերագիտության մեջ առաջին հայի՝ Ջեյմս Բաղյանի նվերը. տարբերանշաններ STS-29 Դիսքավերի տիեզերանավի անձնակազմի, որով իրագործել է թռիչք լուսնի վրա 1989թ.: Կարելի է երկար թվարկել ձեռքբերումների մասին, սակայն բավարարվենք այսքանով՝ թողնելով, որ երիտասարդ սերունդը ավելի նվիրյալ գտնվի թանգարանաշինության շնորհաշատ գործում: Այս հավաքածուները անգնահատելի դեր ունեն ոչ միայն մեր ժողովրդի պատմության համապատասխան ժամանակահատվածը, պատմական անցքերը, տարբեր գործիչների ներդրումները հավուր պատշաճի ներկայացնելու գործում, այլև Նոր և նորագույն շրջանի պատմության բաժնի աշխատանքները օբյեկտիվ գնահատելու և հետագա գործունեությունը հանրությանը ներկայացնելու ուղղությամբ:

## Եզրակացություն

Այսպիսով, ՀՊԹ-ն լինելով մեր անցյալի ժառանգության պատմության կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը, նրա գործունեության մեջ կարևորվում է առանձին բաժինների կատարած մանրակրկիտ և շնորհաշատ աշխատանքները, այդ թվում նոր և նորագույն պատմության բաժնի, որի ուսերին է դրված նաև այսօր մեր շուրջը կատարվող հասարակական, քաղաքական, տնտեսական երևույթների օբյեկտիվ ներկայացնելը, պետական, ռազմական քաղաքական դեմքերի և իրադարձությունների արժանի գնահատանքները: Բաժինն իր կարևոր ներդրումն է ունեցել մայր թանգարանի գործունեության մեջ և ամբողջացրել է նրա պատմությունը գիտակրթական, հավաքչական և ցուցադրության տարբեր ոլորտներում: Կարծում ենք՝ այս ուսումնասիրությունը կարևոր աղբյուր և հիմնաքար կհանդիսանա գիտակրթական և մշակութային թեմաներով զբաղվող անհատների, ուսումնական հաստատությունների, տարբեր կազմակերպությունների համար:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՊԹ – Հայաստանի պատմության թանգարան
ՀԱԱ – Հայաստանի ազգային արխիվ
ՍԴԲՀԿ – Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպություն
ՀՍԽՀ – Հայկական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն
ՀՍԴԲԿ – Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն
ԽՍՀՄ – Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
ՀԿ/բ/Պ – Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիա
ՍՍՌՄ – Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միություն
ԳԱ – Գիտությունների ակադեմիա
ՀՊՊԹ – Հայաստանի պատմության պետական թանգարան

ՀՍՍՌ – Հայկական սովետական սոցիալիստական ռեսպուբլիկա

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՀԿԿ – Հայաստանի կոմունիստական կուսակցություն

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### Արխիվային նյութեր

ՀԱԱ ֆ. 207, ց.1, գ.28, թ.7 ձեռագիր:

ՀԱԱ ֆ. 511, ց.3, գ.446:

ՀԱԱ, ֆ. 1191, ց.16, գ.67, թ.125:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ – ՀՍՍՌ ԳԱ պետական պատմական թանգարան, ֆ.1, ց.1, գ.238:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ – ՀՍՍՌ ԳԱ պետական պատմական թանգարան, ֆ.1, ց.1, գ.340:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 1965 – ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրություն, Հայաստանի պատմության պետական թանգարան, ֆ.1, ց.2, գ.129:

ՀՊԹ արխիվ, ֆ.1, ց.3, գ.3:

ՀՊԹ արխիվ, ֆ.1, ց.3, գ.5:

ՀՊԹ, նգպֆ, մմ 18816, բ/մ 3402-3764:

ՀՊԹ, նգպֆ, նո. 17543/1-191:

ՀՊՊԹ հաշվետվություն 1945թ, ֆ.1, ց.1, գ.224:

ՀՐԱՄԱՆԱԳԻՐՔ 1991 - Հրամանագիրք Հայաստանի պատմության պետական թանգարանի, հրաման 12, մարտ, 1991:

ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի պետական պատմական թանգարան, ֆ.1, ց.3, գ.7:

### Գրականություն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈՆՈՄԻԱՆ» ՅԵՎ ԱՆՏԱՆՏԱՆ, վավերագրեր իմպերալիստական պատերազմի շրջանից, առաջաբան Աշ. Հովհաննիսյանի...), պետհրատ, Յերեվան., 1926, 11, 13

ՀԱԿՈԲՅԱՆ 2020 – Հակոբյան Վ., *Դավիթ Անանուն*, Երևան, 2020, 140–141:

ՀԱԿՈԲՅԱՆ 2017 – Հակոբյան Վ., Ալեքսանդր Մյասնիկյանի հասարակական-քաղաքական գործունեության մինչբոլշևիկյան փուլը, «Պատմություն և մշակույթ» *հայագիտական հանդես*, Երևան, 2017, 96–107:

ԵՐՋՆԿՅԱՆ 1923 – (Ս. Երզնկյան), Սուրեն Ե., Ֆիգուրա օդիոզա, «*Մարտակոչ*», Թիֆլիս, 1923, թիվ 160, սեպտեմբերի 5, 2–3:

ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ 1974 – «Բանբեր Հայաստանի արխիվների», 2(39), խմբագիր Հարութունյան Ա., Երևան, 1974, 179:

ՍԻՄՈՆՅԱՆ 1990 – Սիմոնյան Ա, «Հայաստանի պետական թանգարանի հիմնադրման մասին», *Բանբեր Հայաստանի արխիվների*, Երևան, 1990-1, 1 (86), 186:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 1990 – Հովհաննիսյան Պ., Հակոբ Մանանդյանի թղթերից, *Բանբեր Հայաստանի արխիվների*, Երևան, 1990, 2, 128–130:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 1998 – Աբրահամյան Հ., Դավիթ Անանունի քաղաքական ճակատագիրը, «*Լրաբեր հասարակական գիտությունների*», Երևան, 1998, թիվ 1, 27:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ 1921 – «Խորհրդային Հայաստան», 10 հուլիս, 1921, №123:

Հ.Ս.Խ.Հ. ԴԵԿՐԵՏՆԵՐԻ ՈՒ ՀՐԱՄԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ 1921 – Հ.Ս.Խ.Հ. դեկրետների հրամանների ժողովածու, պրակ 2, Էջմիածին, 1921, 56:

ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ 1984 – Ազնավուրյան Գ., Դավիթ Անանունի նամակագրությունից, *Պատմա-բանասիրական հանդես*, Երևան, 1984, թիվ 1, 175–176:

ՍԻՄՈՆՅԱՆ 1991 – Սիմոնյան Ա., *Թանգարանաշինությունը Հայաստանում 1920–1935 թթ.*, ավտորեֆերատ, Երևան, 1991:

ՀԱՍՐԱԹՅԱՆ 1972 – Հասրաթյան Մ., Հայաստանի պատմության պետական թանգարանը, «*Սովետական Հայաստան*», Երևան, 1972, №12, 32–34:

Seda Galstyan
*History Museum of Armenia*
sedagalstyan@yahoo.com

## THE STAGES OF THE ACTIVITY OF THE DEPARTMENT OF MODERN AND CONTEMPORARY HISTORY OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

**Keywords**: department of Revolution, decree, Soviet period, modern and contemporary history, David Ananun, Mother Museum.

During the 105-year activity of the History Museum of Armenia, the 5th department occupies a special place. It was called by different names in different years - the department of revolution, the Patriotic War, the history of the new and Soviet periods, new and newest history. In 1928, the department was closed, and in 1932 it was reopened and operated as a separate museum of the revolution until March 1991. During the years of the Third Republic of Armenia, the Museum of the Revolution joined the History Museum of Armenia and became the department of the modern history period, and a little later - it became the department of Modern and Contemporary History. The issue of joining the two museums was raised back in 1960 by the President of the Academy of Sciences of the Armenian SSR Viktor Hambartsumyan, but then it was removed from the agenda for obvious reasons. The years of Perestroika contributed to the joining process. The new department includes the history of the Armenian people from the second half of the 17th century up to the present day.

This article presents the different stages of the activities of the department of Modern and Contemporary History.

Седа Галстян
*Музей истории Армении*
sedagalstyan@yahoo.com

## ЭТАПЫ ДЕЯТЕЛЬНОСТИ ОТДЕЛА НОВОЙ И НОВЕЙШЕЙ ИСТОРИИ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

**Ключевые слова:** отдел революции, декрет, советский период, новая и новейшая история, Давид Ананун, Мать музей

В период 105-летней деятельности Музея Истории Армении своё особое место занимает 5-й отдел, который в разные годы именовался по разному – отдел революции, отечественной войны, истории нового и советсокого периода, новой и новейшей истории. В 1928 г. отдел был закрыт, а в 1932 г. снова открылся и действовал как отдельный музей революции до марта 1991 г. В годы третьей республики Армении музей революции присоединился с Музеем Истории Армении и стал отделом периода новейшей истории, а чуть позже – стал отделом новой и новейшей истории. Вопрос объединения двух музеев был поднят ещё в 1960 г. президентом

Академии наук Армянской ССР Виктором Амбарцумяном, однако тогда этот вопрос был снят с повестки по понятным причинам. Годы перестройки поспособствовали процессу объединения. Новый отдел включает в себе историю армянского народа со второй половины 17-го века до наших дней.

В данной статье представлены разные этапы деятельности отдела новой и новейшей истории.